/6240

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Ն ԷՊ/14

Ք. Երևան 04.05.2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության,մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Գագիկ Սաֆարյանի (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ-ն, ի դեմս կազմակերպության ղեկավար Անահիտ Գևորգյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1115. Երիտասարդության ծրագիր» ծրագրի «11001. Երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ» միջոցառումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշումը Հայաստանի Հանրապետության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2121-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշումներ), Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի մարտի 14-ի N 389-Ա հրամանով հաստատված դրամաշնորհի հատկացման մրցույթի հանձնաժողովի 2022 թվականի մարտի 11-ի թիվ 07/22 ամփոփիչ արձանագրությունը և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի ապրիլի 4-ի N 547-Ա/2 հրամանը՝ «Մարտունի խոշորացված համայնքի պատմամշակութային ժառանգության փոխանցում երիտասարդներին» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Սույն Պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով՝ համաձայն Պայմանագրի Հավելված N 2-ում ներկայացված ֆինանսական նախահաշվի, Կազմակերպությանը հատկացնել 2,424.0 հազ. (երկու միլիոն չորս հարյուր քսանչորս հազար) ՀՀ դրամ գումար՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և տուրքերը, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշումներով և սույն Պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ Միջոցառումներ) ներկայացված են սույն Պայմանագրի

Հավելված N 1-ում, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրամաշնորհային ծրագիրը՝ Հավելված N 5-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Որոշումներով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված առանձին Միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն Պայմանագիրն ՀՀ օրենսդրությամբ կամ սույն Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված Միջոցառման արդյունքը Պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.2.3. անհրաժեշտության դեպքում Պայմանագրի նախահաշվով նախատեսված ծախսային ուղղություններում իրականացնել յուրաքանչյուր ծախսային ուղղության գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. կատարել Ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել Ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված Միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված Միջոցառումը համապատասխանում է Ծրագրի և սույն Պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և (կամ) սույն Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.2. կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.3. սույն Պայմանագրով սահմանված կարգով Պետական մարմին ներկայացնել Միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ Ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.4. սույն Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.5. Պետական մարմնի կողմից առանձին Միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ Պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.6. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.7. ավարտված Միջոցառման փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը ներկայացնել Պետական մարմին 7.3. կետով սահմանված ժամկետում, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կազմակերպությունում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար:

2.4.8. Պայմանագրով սահմանված աշխատանքների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև 2022 թվականի դեկտեմբերի 23-ը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը Ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է Ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1. Պայմանագրի արդյունքն ընդունվում է Պետական մարմնի և Կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.minfin.am հասցեով գործող կայքի «Դրամաշնորհներ» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում) պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (Հավելված N 4) և հաշվետվությունը: Ընդ որում Կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2. Եթե իրականացված Միջոցառումը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պետական մարմինը Պայմանագրի 4.1. կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով Կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3. Եթե իրականացված Միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և Պայմանագրի 4.2. կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով Կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կկազմակերպության նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4. Եթե Պայմանագրի 4.2. կետով սահմանված ժամկետում Պետական մարմինը չի ընդունում Պայմանագրի 4.1. կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված Միջոցառումը համարվում է ընդունված և Պայմանագրի 4.2. կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պետական մարմինը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով Կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Պայմանագրի 1.1.-ին կետում սահմանված գումարը Կազմակերպությանն է հատկացվում համաձայն վճարման ժամանակացույցի (Հավելված N 3), որի 80%-ը հատկացվում է Պայմանագրի կնքումից հետո, իսկ 20%-ը պայմանագրի 4.1.-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ Կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

5.3. Համաձայն «ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2022 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Պայմանագրի Հավելված N 1-ում նշված Ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում Կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1. կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև Պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն Պետական մարմնի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները Պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3. Պայմանագրով նախատեսված Ծրագրի կատարման և հաշվետվությունների ներկայացման ժամկետը խախտելու դեպքում Կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ Պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4. Պայմանագրի 6.2. և 6.3. կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Միջոցառման իրականացման արդյունքում Կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ Պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.5. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության, հաշվետվությունների ներկայացման ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7.2.Պայմանագրով նախատեսված Կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.3. Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը մինչև 2022 թվականի օգոստոսի 31-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը մինչև 2022 թ. սեպտեմբերի 20-ը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Հայաստանի Հանրապետության Պետական մարմնի կողմից սույն Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 5 հավելվածներով հաստատվում են, համապատասխանաբար, Ծրագրի միջոցառումը, նախահաշիվը, վճարման ժամանակացույցը, հանձնման-ընդունման ակտը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրամաշնորհային ծրագիրը, որոնք հանդիսանում են սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

9.2. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պետական մարմինը միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ Պետական մարմինը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

9.3. Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ www,escs.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կազմակերպությունը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը Պետական մարմինը այն ուղարկում է նաև Կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.4. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.5. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

9.6. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ
Երևան, Վ. Սարգսյան 3	Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Կամոյի 17,1402
Կառավարական տուն N 2	Էլ. փոստ՝ kananc7@gmail.com
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	բանկ՝ «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732	Հ/Հ 2476601369350000
Գլխավոր քարտուղար՝	ՀՎՀՀ 08410372
Գագիկ Սաֆարյան	Կազմակերպության ղեկավար՝
/ստորագրություն/	**Անահիտ Գնորգյան**
Կ.S.	/ստորագրություն/
	Կ.S.

2022 թ. դեկտեմբերի 4 ին
կնքված N 2/14 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Իրականացնող կառույց՝ «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ

Իրականացվող ծրագրի անվանում՝ «Մարտունի խոշորացված համայքի պատմամշակութային ժառանգության փոխանցում երիտասարդներին»:

Իրականացման ժամանակահատված՝01.06.2022-31.08.2022

NN ը/կ	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման անվանումը	նկարագիրը	կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	ակնկալվող արդյունքները և դրանց գնա-հատման չափանիշները	միջոցառման իրականացման վերջնաժամկետը	հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
1.	Կրթական ծրագրի մշակում	Բովանդակության բաղադրիչներն են. Պատմամշակութային արժեքներ, կոթողներ, ժառանգություն Գրողներ, բանաստեղծներ, նկարիչներ և այլ հայտնի մարդիկ Գեղարքունիքի մարզից Ընթերցանություն: Ճամբարի մեկ օր նվիրված կլինի ընթերցանության՝ երիտասարդներին ծանոթացնելու ընթերցանության մշակույթին: Տարածաշրջանի երգարվեստ, պարարվեստ	Աշխատանքի ընդունել դասընթացավարի: Դասընթացավարի հետ մշակել պատմամշակութային կրթադաստիարակչական ծրագիր Մարտունի համայնքում բնակվող երիտասարդների համար: Կրթական ծրագիրն իր մեջ կներառի մեկ շաբաթյա ցերեկային, օրական 6 ժամ տևողությամբ բովանդակություն:	Այս ծրագրի շրջանակներում ճամբարի համար առկա կլինի կրթական ծրագիր: Որպես երկարաժամկետ արդյունք կազմակերպությունը կօգտագործի այդ ռեսուրսն այլ ճամբարներ կազմակերպելիս: Գնահատման չափանիշ.փաստաթղթային ծրագրի առկայություն	30.06.2022	համաձայն ՀՀ ԿԳՄՄՆ-ի կողմից սահմանված դրամաշնորհային ծրագրերի հաշվետվությունների ներկայացման կարգի և ձևաչափի մինչև 10.12.2022թ. :	Փորձագետ՝ 300.000 ՀՀ դրամ

		Տարածաշրջանի գաստրոնոմիկ ժառանգությունը					
2.	14-17 տարեկան երիտասարդների ընդունելության մրցույթի հայտարարում:	Ծրագրի ուղղակի շահառուները Մարտունի խոշորացված համայնքի 14-17 տարեկան երխաներն են: Խմբերը կներառեն, տեղացի, արցախահայ երիտասարդների, ՌԴ-ում բնակվող և Հայաստան հանգստի վերադարձած երիտասարդների: Խմբերում առավելությունը կտրվի սոցիալապես անապահով ընտանիքների երիտասարդներին:	Հայտարարել բաց մրցույթ 14-17 տարեկան երիտասարդների ընդունելության համար:	Ընտրված 60 երիտասարդներ: Գնահատման չափանիշներ. մրցույթի առկա հրապարակում սոցիալական ցանցերում մասնակիցների ընտրության չափանիշների սահմանում ընտրող հանձնաժողովի կազմում, հանձնաժողովի արձանագրություն	30.06.2022	համաձայն ՀՀ ԿԳՄՄՆ-ի կողմից սահմանված դրամաշնորհային ծրագրերի հաշվետվությունների ներկայացման կարգի և ձևաչափի մինչև 10.12.2022թ. :	0 ՀՀ դրամ
3.	60 երիտասարդի համար նախատեսված մեկշաբաթյա հանգիստ կազմակերպում	Կազմակերպել 60 երիտասարդ համար նախատեսված մեկշաբաթյա հանգիստ ՄԿՀԽ ՀԿ-ի գրասենյակի տարածքում, որը հարմար է նմանատիպ միջոցառումների համար: Ճամբարի մեկ խմբի համար նախատեսված ժամանակահատվածը 1 շաբաթ է, ընդհանուր խմբերի համար տևողությունը՝ 3 շաբաթ:	Կազմակերպել 60 երիտասարդ համար նախատեսված մեկշաբաթյա հանգիստ ՄԿՀԽ ՀԿ-ի գրասենյակի տարածքում, որը հարմար է նմանատիպ միջոցառումների համար: Ճամբարի մեկ խմբի համար նախատեսված ժամանակահատվածը 1 շաբաթ է, ընդհանուր խմբերի համար տևողությունը՝ 3 շաբաթ:	Մարտունի խոշորացված համայքում բնակվող 60 երիտասարդ կստանա գիտելիք համայնքի պատմամշակութայի ն ժառանգության վերաբերյալ: 60 երիտասարդ կանցկացնի իր ամառային արձակուրդները	31.08.2022	համաձայն ՀՀ ԿԳՄՄՆ-ի կողմից սահմանված դրամաշնորհային ծրագրերի հաշվետվությունների ներկայացման կարգի և ձևաչափի մինչև 10.12.2022թ. :	1,125.000 ՀՀ դրամ

				կրթադաստիարակչական միջավայրում: Գնահատման չափանիշներ. լուսանկարներ նախնական, միջանկյալ և վերջնական գնահատման համեմատական արդյունքներ գրանցման թերթիկներ հրապարակումներ սոցիալական ցանցերում			
4.	Սիրողական տեսահոլովակների պատրաստում	Լավագույն տեսահոլովակները կհրապարակվեն կազմակերպության մեդիա ռեսուրսներով	Երիտասարդներին հանձնարարել առաջադրանք յուրաքանչյուր բնակավայրի վերաբերյալ պատրաստել սիրողական տեսահոլովակներ: Հրապարակել լավագույն տեսահոլովակները կազմակերպության մեդիա ռեսուրսներում:	Համայնքը կունենա մնայուն ռեսուրս: Երիտասարդները ձեռք կբերեն տեսահոլովակներ պատրաստելու հմտություն և կամրապնդեն ճամբարի ընթացքում յուրացրածը: Գնահատման չափանիշներ. Սոցիալական ցանցերում տեսահոլովակների հրապարակում լուսանկարներ	31.08.2022	համաձայն ՀՀ ԿԳՄՄՆ-ի կողմից սահմանված դրամաշնորհային ծրագրերի հաշվետվությունների ներկայացման կարգի և ձևաչափի մինչև 10.12.2022թ. :	0 դրամ

	Վարչական ծախսեր					34.000 դրամ
	Աշխատավարձ Ծրագրի ղեկավար և հաշվապահ					561.000ՀՀ դրամ
	Ընդամենը					2,020.000
	ԱԱՀ					404,000
ԸՆԴԱՄԵՆԸ						2,424.000

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Գագիկ Սաֆարյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ
Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Կամոյի
17,1402
Էլ. փոստ՝ kananc7@gmail.com
բանկ ՝ «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2476601369350000
ՀՎՀՀ 08410372
Կազմակերպության ղեկավար՝
Անահիտ Գևորգյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված N 2
2022թ. մայիսի 4-ին
կնքված N 43/4 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Դրամաշնորհառու *«Մարտունու կանանց համայնքային խորհուրդ ՀԿ»*
Ծրագրի անուն *Մարտունի խոշորացված համայքի պատմամշակութային ժառանգության փոխանցում երիտասարդներին:*
Ծրագրի տևողություն *01.06.2022-31.08.2022*

Հ/Հ	Բյուջեի տողի նկարագրական	Միավոր	Միավորի քանակ	Միավորի արժեք (ՀՀ դրամ)	Պահանջվող գումար (ՀՀ դրամ)
Ա	Աշխատավարձ				
1.1	Ծրագրի ղեկավար	ամիս	3	120000	360000
1.2	Հաշվապահ	ամիս	3	67000	201000
1.3	Փորձագետ	ամիս	3	100000	300000
Ընդամենը Ա					861,000
Բ	Ծրագրային ծախսեր				
2.1	Սնունդ (15 օր × 20 մասնակից × 750 դրամ)	օր	15	15000	225000
2.2	Մասնակիցներին տրամադրվող գրենական փաթեթ	փաթեթ	60	2000	120000
2.3	Շապիկներ մասնակիցներին	հատ	60	6000	360000
2.4	Մասնակիցների կողմից օգտագործվող հումքի փաթեթ	հատ	60	2000	120000
2.6	Գրականության ձեռքբերում	հատ	60	5000	300000
Ընդամենը Բ					1,125,000
Գ	Վարչական ծախսեր				
3.1	Գրենական պիտույքներ	անգամ	անգամ	1	34000
Ընդամենը Գ					34.000
Ընդամենը					2,020.000
*ԱԱՀ					440,000
ԸՆԴԱՄԵՆԸ					2,424.000

*ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հարկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կազմակերպության կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի	«Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ
և սպորտի նախարարություն	Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Կամոյի 17,1402
Երևան, Վ. Սարգսյան 3	Էլ. փոստ՝ kananc7@gmail.com
Կառավարական տուն N 2	բանկ՝ «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 2476601369350000
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 08410372
Գլխավոր քարտուղար՝	Կազմակերպության ղեկավար՝
Գագիկ Սաֆարյան	**Անահիտ Գևորգյան**
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

ԿԱՀՄԵՑ՝

Մշակութային և սպորտային ծրագրերի ֆինանսավորման բաժնի գլխավոր մասնագետ

..... Լ. Մուրադյան

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

Մշակութային և սպորտային ծրագրերի ֆինանսավորման բաժնի պետ ..... Ն. Վարդանյան

Ֆինանսաբյուջետային վարչության պետ ..... Ա. Թադևոսյան

Գլխավոր քարտուղարի տեղակալ..... Վ. Գասպարյան

Հավելված N 3
2022թ. մայիսի 4 -ին
կնքված N 4/19 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հազ. դրամ

Կազմակերպության անվանումը՝ «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ

«1115. Երիտասարդության ծրագիր» «11001. Երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ»
«Մարտունի խոշորացված համայնքի պատմամշակութային ժառանգության փոխանցում երիտասարդներին» ծրագրի

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Մրցույթի պլանով նախատեսված (CPV) կոդը	Կատարման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
		հուն վար	փետր վար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
«ԵՔ-ԴՄ-ՀՅ 01/22»	99999999/	--	--	--	--	--	1,939.2	1,939.2	1,939.2	2,424.0	2,424.0	2,424.0	2,424.0	2,424.0

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀ 900011032472, ՀԿՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար
Գագիկ Սաֆարյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ
Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Կամոյի 17,1402
Էլ. փոստ՝ kananc7@gmail.com
բանկ՝ «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՎՀ 2476601369350000
ՀԿՀՀ 08410372
Կազմակերպության ղեկավար՝
Անահիտ Գևորգյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 4
2022 թ. Դեկտեմբեր 4 -ին
կնքված N 2-ՊՊ պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պետական մարմին

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պետական մարմինը և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման							
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
			ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____

ստորագրություն

_____

ազգանուն, անուն

Կ.Տ

Ծառայությունն ընդունեց

_____

ստորագրություն

_____

ազգանուն, անուն

Կ.Տ.

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի	«Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ
և սպորտի նախարարություն	Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Կամոյի 17,1402
Երևան, Վ. Սարգսյան 3	Էլ. փոստ՝ kananc7@gmail.com
Կառավարական տուն N 2	բանկ՝ «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 2476601369350000
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 08410372
Գլխավոր քարտուղար՝	Կազմակերպության ղեկավար՝
Գագիկ Սաֆարյան	**Անահիտ Գևորգյան**
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

ԿԱՀՄԵՑ՝

Մշակութային և սպորտային ծրագրերի ֆինանսավորման բաժնի գլխավոր մասնագետ

..... Լ. Մուրադյան

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

Մշակութային և սպորտային ծրագրերի ֆինանսավորման բաժնի պետ ..... Ն. Վարդանյան

Ֆինանսաբյուջետային վարչության պետ ..... Ա. Թադևոսյան

Գլխավոր քարտուղարի տեղակալ..... Վ. Գասպարյան

Հավելված 5
2022 թ. մարտի 4-ին
կնքված N 25/14 պայմանագրի

«ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆԸ ՄԻՏՎԱԾ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ ԱՐՇԱՎՆԵՐԻ, ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐԻ, ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐԻ ԵՎ ԱՅԼՆ)» ԽԹԱՆՈՒՄ՝ ԱՅԴ ԹՎՈՒՄ ՆԱԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱԿՏԻՎ ՆԵՐԳՐԱՎՄԱՄԲ»
դրամաշնորհային ծրագրի

Համառոտագիր

Գեղարքունիքի մարզի Մարտունի խոշորացված համայքը բաղկացած է 19 բնակավայրերից և յուրաքանչյուր բնակավայր ունի պատմամշակութային խոշոր ժառանգություն, որը քիչ հայտնի է և որի մասին երիտասարդներին չի ներկայացվում: Սեփական համայնքում առկա պատմամշակութային ժառանգության վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը և ստացման աղբյուրների սակավությունը երիտասարդներին հեռացնում է սեփական արմատներից: Մարզում արտագնա աշխատանքի մեկնողների մեծ թվի շնորհիվ նաև երիտասարդներն իրենց ապագան տեսնում են այլ երկրում: Պատճառներից մեկն այն է, որ չկա սեփական մշակույթի վերաբերյալ գիտելիք:

Այս ծրագրի շրջանակներում Մարտունի համայնքի պատմամշակութային ժառանգության վերաբերյալ արդեն հավաքագրված տեղեկատվության հիման վրա կստեղծվի ճամբարային մեկշաբաթյա կրթական ծրագիր (երեք խմբի համար, յուրաքանչյուր խմբում 20 երիտասարդ) տեղի և արցախցի երիտասարդ ների համար, որը կստեղծի կապ և սեփականության զգացողություն երիտասարդ ների մոտ և խթան կհանդիսանա հետագա պետականաշինության համար:

«Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ-ի **առաքելությունն** է նպաստել համայնքների զարգացման գործում բնակչության մասնակցային վարքի ձևավորմանը և այդ միջոցով համայնքների տնտեսական, սոցիալական, մշակութային խնդիրների արդյունավետ լուծմանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով խոցելի խմբերին:

*Ծրագրի **նպատակն** է ճամբարային հանգստի կազմակերպման միջոցով Գեղարքունիքի մարզի Մարտունի խոշորացված համայնքի 14-17 տարեկան երիտասարդներին ծանոթացնել համայնքի պատմամշակութային կոթողներին, առկա ռեսուրսներին և նշանավոր անձանց՝ սերմանելով սեր համայնքի նկատմամբ:*

Խնդիրներ

Խնդիր 1 Մշակել ճամբարային մեկշաբաթյա կրթական ծրագիր: 14-17 տարեկան երիտասարդների համար, դասընթացավարի հետ միասին և ՄԿՀԽ հասարակական կազմակերպության հավաքագրած տեղեկատվության հիման վրա մշակել կրթական ծրագիր:

Խնդիր 2 Կազմակերպել մեկշաբաթյա ցերեկային ճամբար երիտասարդների համար: Երեք ամսում երեք 20 հոգանոց խմբերի համար կազմակերպել մեկշաբաթյա ճամբարային հանգիստ ՄԿՀԽ հասարակական կազմակերպության տարածքում:

Արդյունքներ

Մարտունի խոշորացված համայքում բնակվող 60 երիտասարդ կստանա գիտելիք համայնքի պատմամշակութային ժառանգության վերաբերյալ: 60 երիտասարդ անցկացնի իր ամառային արձակուրդները կրթաղաստիարակչական միջավայրում: Մարտունի համայնքի պատմամշակութային ժառանգությունը կպահպանվի և կտարածվի:

Ծրագրի նկարագրություն

Հիմնախնդրի և կարիքի հիմնավորում

Գեղարքունիքի մարզի Մարտունի խոշորացված համայքը բաղկացած է 19 բնակավայրերից և յուրաքանչյուր բնակավայր ունի պատմամշակութային խոշոր ժառանգություն, որը քիչ հայտնի է և որի մասին երիտասարդներին չի ներկայացվում: Սեփական համայնքում առկա պատմամշակութային ժառանգության վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը և ստացման աղբյուրների սակավությունը երիտասարդներին հեռացնում է սեփական արմատներից: Մարզում արտագնա աշխատանքի մեկնողների մեծ թվի շնորհիվ նաև երիտասարդներն իրենց ապագան տեսնում են այլ երկրում: Պատճառներից մեկն այն է, որ չկա սեփական մշակույթի վերաբերյալ գիտելիք: Մարտունի համայնքում բնակվող սոցիալապես անապահով երիտասարդները միաժամանակ չունեն ամառային կրթադաստիարակչական հանգստի կազմակերպման մեծ հնարավորություններ: «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» հասարակական կազմակերպությունն իր գործունեության 20 տարիների ընթացքում հավաքագրել և ամբողջացրել է Մարտունի խոշորացված համայնքի յուրաքանչյուր բնակավայրի պատմամշակութային արժեքներն, ինչպես նաև բնակավայրերին բնորոշ բացառիկ ճաշատեսակներ: Սակայն այս հավաքագրված տեղեկատվությունը հանրայնացնելու և երիտասարդներին փոխանցելու անհրաժեշտություն կա: 2020 թվականի 44-օրյա պատերազմի արդյունքում Մարտունի համայնքի բոլոր բնակավայրեր հյուրընկալեցին արցախցիների: Ժամանած արցախահայերի մեծ մասը դեռ բնակվում է Մարտունի համայնքում: Սակայն արցախցի երիտասարդների մեծ մասը ծանոթ չեն տարածաշրջանին, որտեղ բնակվում են: Շատերի մոտ կան հաղորդակցության և ինտեգրացիայի դժվարություններ տեղի երիտասարդների հետ: «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ-ն իրականացրել է կարիքի գնահատում և տրամադրել է հումանիտար աջակցություն արցախից տեղահանվածներին և ունի արցախահայերի հետ աշխատելու մեծ փորձ: Այս ծրագրի շրջանակներում Մարտունի համայնքի պատմամշակութային ժառանգության վերաբերյալ արդեն հավաքագրված տեղեկատվության հիման վրա կստեղծվի ճամբարային մեկշաբաթյա կրթական ծրագիր (երեք խմբի համար, յուրաքանչյուր խմբում 20երիտասարդ) տեղի և արցախցի երիտասարդների համար, որը կստեղծի կապ և սեփականության զգացողություն երիտասարդների մոտ և խթան կհանդիսանա հետագա պետականաշինության համար:

Կազմակերպության փորձառությունը

«Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ-ի **առաքելությունն** է նպաստել համայնքների զարգացման գործում բնակչության մասնակցային վարքի ձևավորմանը և այդ միջոցով համայնքների տնտեսական, սոցիալական, մշակութային խնդիրների արդյունավետ լուծմանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով խոցելի խմբերին: Միջազգային և տեղական տարբեր կառույցների հետ համագործակցությամբ «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ-ն իրականացրել է տարաբնույթ ծրագրեր ուղղված երիտասարդներին, նրանց հայրենաճանաչության, ազգային արժեքների պահպանման և նոր սերնդին փոխանցելուն: Կազմակերպությունն աշխատում է Գեղարքունիքի մարզի համայնքային գրադարանների, մշակութային տների աշխատակիցների, համայնքապետարանների աշխատակիցների հետ՝ հզորացնելով նրանց կարողություններն ու իրականացնելով համատեղ ծրագրեր: Մեր կազմակերպության ջանքերով ստեղծվել է https://martuni.wordpress.com/ տուրիստների համար նախատեսված կայքը, որտեղ ներկայացվում է տարածաշրջանի պատմամշակութային ժառանգությունը, ուտեստները, տոները ավանդապատումներն ու լեգենդները:

…կերպությունն իրականացրել է տարաբնույթ երկարատև և կարճաժամկետ …ընթացներ մեդիագրագիտություն, մարդու իրավունքներ, կար ու ձև, համակարգչային …գիտություն և այլ թեմաներով:
2021 թվականից կազմակերպության Կրթապնակ կրթական բաժինը հանդիսանում է ՀՀ-ում մեծահասակների կրթության 4 կենտրոններից մեկը:

	Ծրագրի անվանումը	Նպատակը և ակնկալվող արդյունքները	Իրականացման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը	Դրամաշնորհի չափը
1.	«Հայաստանի Մեծահասակների կրթության կենտրոնների համակարգային զարգացում»	Նպատակն է ստեղծել մեծահասակների կրթության կենտրոն Մարտունիքում և իրականացնել կրթական ծրագրեր Տարբեր դասընթացների մասնակցած և նոր հմտություններ ձեռք բերած մոտ 650 մեծահասակ Կազմակերպված 11 դասընթաց և «Մշակութային շաբաթ Մարտունիում» միջոցառումների շարք:	01.06.2021-31.11.2021	Դի-Վի-Վի ինթերնեյշնալ ի հայաստանյան գրասենյակ	6.000.000 ՀՀ դրամ
2.	Մարտունու տարածաշրջանի մշակութային կյանքը խորհրդային շրջանում եւ վերաիմաստավորման հնարավորությունները հետխորհրդային շրջանում	Խորհրդային շրջանում Մարտունու տարածաշրջանի մշակութային կյանքի պատմությանը եւ հետխորհրդային շրջանում առկա հնարավորություններին երիտասարդությանը ծանոթացնելու միջոցով նպաստել համայնքներում մշակութային կյանքի վերաիմաստավորմանը:	Ծրագրի տեւողություն: ամիսներ 20 Ծրագրի մեկնարկ: ամիս/տարի 01/08/2021Ծրագրի ավարտ: ամիս/տարի 31/03/2023	Եվրասիա համագործակցություն հիմնադրամի կողմից Շվեդիայի միջազգային զարգացման գործակալության, Սիդայի աջակցությամբ:	10.000.000 ՀՀ դրամ
3.	Գեղարքունիքի մարզն առանց ընտանեկան բռնության.	Ծրագրի նպատակն է կանխարգելել կանանց նկատմամբ ընտանեկան բռնությունը Գեղարքունիքի մարզում՝ իրազեկման արշավի և կանանց հզորացման միջոցով: Վերապատրաստված 20 կին, հանդիպումների մասնակցած մոտ 100 մարդ, 500 հատ տպագրված բուկլետ, եթեր հետարձակվածխ 20 բոպե տևողությամբ տեսանյութ	5.05.2021-30.11.2021.	ԵվրոպայիԽորհուրդ	4.115.000 ՀՀ դրամ

	Որակյալ կրթություն գյուղաբնակ կանանց.	Ծրագրի նպատակն է հզորացնել Գեղարքունիքի մարզի գյուղաբնակ կանանց՝ տրամադրելով հմտություններ: Տարբեր դասընթացների և կարու ձևի պրակտիկ պարապմունքների մասնակցած 20 կին	15.06.2021-31.10.2021	Լիտվայի արտաքին գործերի նախարարությունը ՀՀ ում Լիտվայի դեսպանատան միջոցով	4750 Եվրո
5.	Ապահովել հակամարտությունից տուժած տղաների և աղջիկների առաջնային և կրթական կարիքները Հայաստանում	Նպատակն է ՀՀ Գեղարքունիքի մարզում ապրող արցախահայերին տրամադրել առաջնային հագուստ, հիգիենիկ պարագաներ և գրենական պիտույքներ: Արցախից տեղահանված ր Գեղարքունիքի մարզում տեղակայված հումանիտար աջակցություն ստացած մոտ 1000 մարդ	01.12.2020-01.05.2021	Սեյվ դը չիլդրեն	$105.000
6.	COVID 19 .ՀԿ-ի հաղթահարման պլաններ	Մշակել համավարակի և այլ ֆորս մաժորային իրավիճակներում ՄԿՀԽ ՀԿ-ի կայունության պլաններ: Մշակվել է ֆորս մաժորային, կրթական և հաղորդակցության պլաններ:	2020թ-ի դեկտեմբեր-2021 թվականի փետրվար	Արևելյալ գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորում	3.900.000 ՀՀ դրամ
7.	Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցման կենտրոններ Գեղարքունիքի , Կոտայքի և Արարատի մարզերում	Ծրագրի նպատակն էր նպաստել Գեղարքունիքի, Կոտայքի և Արարատի մարզում ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության, նրանց հզորացմանը և ներդաշնակ ու համերաշխ ընտանեկան հարաբերությունների ձևավորմանը: 250-ից ավել շահառուներ ստացել են ծառայություններ աջակցման կենտրոնների կողմից	2020	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	13,530,000ՀՀ դրամ
8.	Ընտանեկան բռնության կանխարգելմանը համայնքային աջակցություն	Ծրագրի ուղղակի և անուղղակի շահառուների կարողությունների զարգացում, ընտանիքում ոչ բռնի հարաբերությունների ձևավորում, անհատական և համայնքային	2019	Ամերիկյան իրավաբանների միություն	4,320,000 ՀՀ Դրամ

		մակարդակներում հարաբերությունների և մտածելակերպի փոփոխություն, պաշտպանողական մեխանիզմներ հաստատում, զոհերի պաշտպանություն,			
9.	Պտղի սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների կանխարգելում	ՀՀ Գեղարքունիքի, Տավուշի, Լոռու և Կոտայքի մարզերում համայնքային ակտիվ խմբերի ստեղծում, տեղակատվական արշավների կազմակերպում, կնոջ դերի բարձրացմանը նպաստող գործողություններ, բնակչության մոտ համապատասխան մտածելակերպի ձևավորում	2015-2017	ԵՄ, Մարդկային զարգացման միջազգային կենտրոն	32,560,000 ՀՀ դրամ
10.	Համայնքային ընտանեկան սոցիալական աշխատանքի կենտրոններ՝ ի նպաստ Գեղարունիքի մարզի ներդաշնակ համայնքների,	Գեղարքունիքի մարզի Մարտունի, Վարդենիս, Ճամբարակի տարածաշրջաններում բազմակողմանի, արհետավարժ համայնքային սոցիալական աշխատանքի կենտրոնների ստեղծում, ունակ մշակելու և փորձարկելու դժվարին իրավիճակներում հայտնված շահառու ընտանիքների կարիքներով առաջնորդվող սոցիալական աշխատանքի կոնցեպցիա և մոդել	2017-2018	<<Սոցիալական աշխատողների հայկանա ասոցացիա>> ՀԿ	31,091 Եվրո
11.	Ապաստարան կենցաղային բռնության ենթարկված կանանց և երեխաներին	Ապաստարան, իրավաբանական, հոգեբանական խորհրդատվություն, փաստաբանական և սոցիալական աջակցություն, ապաստարանի տրամադրում ընտանիքում բռնության ենթարկված կանանց և երեխաներին	2002-2006	ԱՄՆ ՄԶԳ	$86.000

Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները

*Ծրագրի **նպատակն** է ճամբարային հանգստի կազմակերպման միջոցով Գեղարքունիքի մարզի Մարտունի խոշորացված համայնքի 14-17 տարեկան երիտասարդներին ծանոթացնել համայնքի*

մշակութային կոթողներին, առկա ռեսուրսներին և նշանավոր անձանց՝ սերմանելով սեր այնքի նկատմամբ:

Խնդիրներ

Խնդիր 1 Մշակել ճամբարային մեկշաբաթյա կրթական ծրագիր: 14-17 տարեկան երիտասարդների համար, դասընթացավարի հետ միասին և ՄԿՀԽ հասարակական կազմակերպության հավաքագրած տեղեկատվության հիման վրա մշակել կրթական ծրագիր:

Խնդիր 2 Կազմակերպել մեկշաբաթյա ցերեկային ճամբար երիտասարդների համար: Երեք ամսում երեք 20 հոգանոց խմբերի համար կազմակերպել մեկշաբաթյա ճամբարային հանգիստ ՄԿՀԽ հասարակական կազմակերպության տարածքում:

Արդյունքներ

Մարտունի խոշորացված համայքում բնակվող 60 երիտասարդ կստանա գիտելիք համայնքի պատմամշակութային ժառանգության վերաբերյալ: 60 երիտասարդ կանցկացնի իր ամառային արձակուրդները կրթադաստիարակչական միջավայրում: Մարտունի համայնքի պատմամշակութային ժառանգությունը կպահպանվի և կտարածվի:

Գործողություններ

Որոնք են այն կոնկրետ գործողությունները և մեթոդները ծրագրի նպատակի իրագործմանն ուղղված յուրաքանչյուր խնդրի համար: Ներկայացնել ամսական կտրվածքով աշխատանքային պլան համաձայն ստորև ներկայացված ձևաչափի .

Խնդիր 1 Մշակել ճամբարային մեկշաբաթյա կրթական ծրագիր: 14-17 տարեկան երիտասարդների համար դասընթացավարի հետ միասին և ՄԿՀԽ հասարակական կազմակերպության հավաքագրած տեղեկատվության հիման վրա մշակել կրթական ծրագիր:

Գործողություններ

Աշխատանքի ընդունել դասընթացավարի: Դասընթացավարի հետ մշակել պատմամշակութային կրթադաստիարակչական ծրագիր Մարտունի համայնքում բնակվող երիտասարդների համար: Կրթական ծրագիրն իր մեջ կներառի մեկ շաբաթյա ցերեկային, օրական 6 ժամ տևողությամբ բովանդակություն: Բովանդակության բաղադրիչներն են.

- *Պատմամշակութային արժեքներ, կոթողներ, ժառանգություն*
- *Գրողներ, բանաստեղծներ, նկարիչներ և այլ հայտնի մարդիկ Գեղարքունիքի մարզից*
- *Ընթերցանություն: Ճամբարի մեկ օր նվիրված կլինի ընթերցանության՝ երիտասարդներին ծանոթացնելու ընթերցանության մշակույթին:*
- *Տարածաշրջանի երգարվեստ, պարարվեստ*
- *Տարածաշրջանի գաստրոնոմիկ ժառանգությունը*

Խնդիր 2 Կազմակերպել մեկշաբաթյա ցերեկային ճամբար երիտասարդների համար: Երեք ամսում երեք 20 հոգանոց խմբերի համար կազմակերպել մեկշաբաթյա ճամբարային հանգիստ ՄԿՀԽ հասարակական կազմակերպության տարածքում:

Գործողություններ

Հայտարարել բաց մրցույթ 14-17 տարեկան երիտասարդների ընդունելության համար:

Կազմակերպել 60 երիտասարդ համար նախատեսված մեկշաբաթյա հանգիստ ՄԿՀԽ ՀԿ-ի գրասենյակի տարածքում, որը հարմար է նմանատիպ միջոցառումների համար: Ճամբարի մեկ խմբի համար նախատեսված ժամանակահատվածը 1 շաբաթ է, ընդհանուր խմբերի համար տևողությունը՝ 3 շաբաթ:

Երիտասարդներին հանձնարարել առաջադրանք յուրաքանչյուր բնակավայրի վերաբերյալ պատրաստել սիրողական տեսահոլովակներ:Հրապարակել լավագույն տեսահոլովակները կազմակերպության մեդիա ռեսուրսներում:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Կազմակերպություն *«Մարտունու կանանց համայնքային խորհուրդ ՀԿ»*

Ծրագիր Մարտունի խոշորացված համայքի պատմամշակութային ժառանգության փոխանցում երիտասարնդներին:

Ժամանակահատված *01.06.2022-31.08.2022*

Հ/Հ	Գործողություն	Պատասխան ատու	Ամիս		
			1	2	3
1	*Աշխատանքի ընդունել դասընթացավարի:*	Ծրագրի ղեկավար	X		
2	*Դասընթացավարի հետ մշակել պատմամշակութային կրթադաստիարակչական ծրագիր Մարտունի համայնքում բնակվող երիտասարդների համար: Կրթական ծրագիրն իր մեջ կներառի մեկ շաբաթյա ցերեկային, օրական 6 ժամ տևողությամբ բովանդակություն:*	Ծրագրի ղեկավար	X		
3	*Հայտարարել բաց մրցույթ 14-17 տարեկան երիտասարդների ընդունելության համար:*	Ծրագրի ղեկավար	X		
4	*Կազմակերպել 60 երիտասարդի համար նախատեսված մեկշաբաթյա հանգիստ ՄԿՀԽ ՀԿ-ի գրասենյակի տարածքում, որը հարմար է նմանատիպ միջոցառումների համար:*	Ծրագրի ղեկավար		X	X
5	*երիտասարդներին Հանձնարարել առաջադրանք յուրաքանչյուր բնակավայրի վերաբերյալ պատրաստել սիրողական տեսահոլովակներ:*	Ծրագրի ղեկավար		X	X
6	*Հրապարակել լավագույն տեսահոլովակները կազմակերպության մեդիա ռեսուրսներում:*	Ծրագրի ղեկավար			X

Ծրագրի շահառուները ու շահագրգիռ կողմերը *Ծրագրի ուղղակի շահառուները Մարտունի խոշորացված համայնքի 14-17 տարեկան երխաներն են: Խմբերը կներառեն, տեղացի, արցախահայ երիտասարդների, ՌԴ-ում բնակվող և Հայաստան հանգստի վերադարձած երիտասարդների: Խմբերում առավելությունը կտրվի սոցիալապես անապահով ընտանիքների երիտասարդներին:*

Ռիսկերի գնահատում *Հնարավոր ռիսկ է համավարակի տարածումը: ՄԿՀԽ հասարակական կազմակերպությունը բոլոր միջոցառումները կազմակերպում է համավարակի դեմ պայքարի բոլոր հնարավոր միջոցները ձեռք առնելով: Մասնակիցների ցածր հետաքրքրվածությունը: Կօգտագործվեն կազմակերպության բոլոր մեդիա ռեսուրսները մասնակիցներին մոտիվացնելու և արդյունավետ ներգրավվածության համար:*

Ծրագրի աշխատակազմը

1.Ծրագրի ղեկավար, --Անահիտ Գևորգյան
Ծրագրին համակարգում, դրամաշնորհի շրջանակներում բոլոր գործողությունների ժամանակին, պատշաճ և արդյունավետ իրականացում: Ծրագրի վերաբերյալ տեղեկատվության տարածում:
2. Ծրագրի դասընթացավար-կընտրվի բաց մրցույթով:
Կրթական ծրագրի մշակում և իրականացում:
2.Ծրագրի հաշվապահ Արմեն Հայրապետյան— Իրականացնել հաշվապահական հաշվառման վարումը, ծրագրի ֆինանսական հաշվետվությունների ժամանակին կազմումն ու ներկայացումը, աշխատավարձերի հաշվարկումը,պետական բյուջե հարկերի և վճարների, պետական արտաբյուջետային սոց ֆոնդերի՝ ապահովագրական վճարների, բանկային կազմակերպությունների՝վճարումների ճշգրիտ հաշվեգրում և փոխանցումապահովում, ֆինանսական ծախսերի համապատասխանությանը ՀՀ հաշվապահական նորմերին և դրամաշնորհային ծրագրերի բյուջեների հոդվածներին,

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Գագիկ Ստեփանյան
/ստորագրություն/
L.S. 02698732

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ
Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Կամոյի 17,1402
Էլ. փոստ՝ kananc7@gmail.com
բանկ՝ «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2476601369350000
ՀՎՀՀ 08410372
Կազմակերպության ղեկավար՝
Անահիտ Գևորգյան
/ստորագրություն/
L.S. 08410372